«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 82/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 15.08.2023թ. ժամը 16:15

Համաձայն ՀՀ Վարչապետի աշխատակազմից 17.07.2023թ-ին ՀՀ Արդարադատության նախարարություն հասցեյագրված,իսկ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝28.07.2023թ. ստացված քաղաքացիներ՝ Արմիկ Գրիգորի Հարությունյանի և Արմեն Ռուբենի Հարությունյանի թիվ 150-42077 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ՄՆԴ/1500/04/21 սնանկության գործով կառավարիչ՝ Սամսոն Ղուկասանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Օգոստոսի 15-ին, ժամը 16-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատուներ՝Արմիկ Գրիգորի Հարությունյանը և Արմեն Ռուբենի Հարությունյանը
ՄՆԴ/1500/04/21 սնանկության գործով կառավարիչ՝Սամսոն Ղուկասյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատուներ՝Արմիկ Գրիգորի Հարությունյանը և ներկայացուցիչ-փաստաբան Հովսեփ Ալբերտի Դավթյանը
ՄՆԴ/1500/04/21 սնանկության գործով կառավարիչ՝Սամսոն Ղուկասյանը

Դիմումատու՝Արմիկ Գրիգորի Հարությունյանը պատշաճ ծանուցված էր,բայց անհայտ պատճառով իր ներկայացուցչի ներկայությունը չէր ապահովվել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. ՀՀ Վարչապետի աշխատակազմից 17.07.2023թ-ին ՀՀ Արդարադատության նախարարություն հասցեյագրված,իսկ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝28.07.2023թ. ստացված քաղաքացիներ՝ Արմիկ Գրիգորի Հարությունյանի և Արմեն Ռուբենի Հարությունյանի թիվ 150-42077 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ ՄՆԴ/1500/04/21 սնանկության գործով սնանկության գործով կառավարիչ՝ Սամսոն Ղուկասյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնների հնարավոր խախտման վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց նիստի մասնակիցների անձը հաստատող փաստաթղթերը,լիազորությունները ,

լիազորագիրը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ նիստին չի ներկայացել դիմումատու-պարտապան Ա/Ձ Արմիկ Գրիգորի Հարությունյանը կամ նրա ներկայացուցիչը,իսկ սնանկության գործով կառավարիչը ներկայանալով հանձնաժողովին իր ներկայացրած փաստաթղթերից բացի լրացուցիչ այլ փաստաթղթերի ներկայացման համար հայտնեց իր պատրաստակամությունը:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ առանց համադիմումատուի նիստը շարունակելու վերաբերյալ, հայտնելով այն կարծիքը որ մյուս դիմումատուն և իր ներկայացուցիչը ներկա են նիստին և իր կարծիքով ներկաների ներկայացրած փաստերը և համապատասխան փաստաթղթերը հնարավորություն կտան ձևավորելու կարծիք եզրակացության գալու համար:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ:

«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և որոշեցին, որ սկսել նիստը առանց համադիմումատուի,ուսումնասիրելով կառավարչի և դիմումատուների ներկայացրած փաստական հանգամանքները և համպատասխան փաստաթղթերը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկաներին ներկայացրեց,որ դիմումը ներկայացված է ՀՀ Վարչապետին,որտեղից հասցեյագրվել է ՀՀ Արդարադատության նախարարությանը,որտեղից էլ վերահասցեյագրվել է «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին,որպիսի հիմքով էլ հանձնարարվել է Կարգապահական հանձնաժողովին քննել կարգապահական վարույթի շրջանակներում կառավարչի վարքագծի կանոնների խախտման փաստերի առկայությունը,որպիսի շրջանակներում էլ պետք է իրականացվի դիմումում նշված փաստական հանգամանքների քննարկումները և տրվի եզրակացություն կառավարչի վարքագծի կանոնների խախտման դեպքերի վերաբերյալ:Նախնական խոսքից հետո նախագահողը դիմումը և պահանջը հակիրճ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց դիմումատու Արմեն Հարությունյանին,ով դիմումը ներկայացնելու համար ձայնը փոխանցեց իր ներկայացուցիչ՝ փաստաբան Հովսեփ Ալբերտի Դավթյանին,ով հանձնաժողովի անդամներին հակիրճ ներկայացնելով բողոքը մասնավորապես նշեց,որ.

- սնանկության վարույթում սնանկության գործով կառավարչի գործողությունները պետք է ուղղված լինի հետևյալին՝

1.Պահպանել հավասարակշռություն կողմերի միջև...

2.Չպատճառել վնաս կողմերին...

3.Կողմերին պարզաբանել իրենց իրավունքները և պարտականությունները...

Փաստաբանի կողմից նշվեցին գործողություններ որոնք կատարվելն են կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացքում,հակառակ այդ ընդունված վարքագծի,այն է.

ա/հայտարարությունները աճուրդների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներում /թերթում/ չի տպվել.

բ/հայտարարություններում լոտի նկարագրում գույքի վթարայնությունը չի նշվել.

գ/ աճուրդի արձանագրություն կազմվել է երկու հատ,նույն օրը և նույն բոպեյին.

դ/առուվաճառքի պայմանագրերը կնքվել են «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ժամկետների խախտումներով.

ե/սխալ է որոշվել շուկայական գինը.

զ/չի աջակցել առողջացման ծրագրի հաստատմանը.

է/առողջացման ծրագրի քննարկման համար ժողով չի հրավիրել.

Դիմումատուի փաստաբան ներկայացուցիչը եզրակացրեց,որ նշված փաստական հանգամանքների վերլուծությունից և համադրումից պարզ է,որ սնանկության գործով կառավարիչը հավասարակշված մոտեցում չի ցուցաբերել կողմերին և դրա արդյունքում վնաս է

պատճառել պարտապանին և երրորդ անձ գրավատուին,օգնելով բանկին,իրացնելով գրավի առարկաները և զրկելով պարտապանին առողջանալու հնարավորություններից և հետագա ապրուստի միջոցներից:Ներկայացուցիչը ավարտելով, անձնական շփումների ժամանակ տեղի ունեցած հեռախոսային խոսակցութուններ և այլ փաստերի վերաբերյալ հանգամանքներ ներկայացնելու համար ձայնը փոխանցեց համասեփականատեր դիմումատու՝Արմեն Հարությունյանին,ով ներկայացրեց դիմումում նշված այն փաստերը,որ կառավարիչը իր հետ հեռախոսազրույցներում իրեն թույլ տվել փողոցային ոճին նմանվող արտահայտություններ և ներկայացրել է անօրինական պահանջներ,այդ թվում

ա/մինչև աճուրդը զանգահարել է ասել է գործունեությունը դադարեցրեք.

բ/Գույքի վաճառքից հետո,դատավորի անունից զանգել և ասել է գույքերի բանալիները հանձնեք կառավարչին,որից հետո հապճեպ կայացվել է գույքերից մեզ վտարելու որոշում:

գ/Շփումների ողջ ընթացքում իրեն պահել է շատ ինքնավստահ,ինքնավստահ արտահայտություններով,որ մեկա բոլոր ատյաններում պարտվելու էք և ձեր պայքարը անիմաստ է:

Բողոքաբերը պնդեց իր դիմում նշված խախտումները,որ կառավարիչը.

1.Որևէ ձևով հնարավորություն չի տվել մարել պայմանագրով նախատեսված պարտավորությունները.

2.Կեղծել է անշարժ գույքի գնահատման եզրակացությունը.

3.Տեղի է ունեցել միջամտություն,որի ամբողջ նպատակն է եղել գրավադրված գույքերի վաճառելը.

4.Բանկը,սնանկության գործով կառավարիչը և սնանկության գործով դատավորը ունեն առանձնահատուկ շահագրգռվածություն գրավադրված գույքերը վերցնելու,իրացնելու հարցում.

Բողոքաբերին հարցեր ուղղելու համար նախագահողը հանձնաժողովի անդամներին հնարավորություն տվեց,որի ընթացքում հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հարցրեց բողոքաբերին Ա/Ձ-ի գործունեության դադարեցման վերաբերյալ դատարանի որոշման առկայության վերաբերյալ:Բողոքաբերը պատասխանեց որ նման որոշում եղել է:

Հանձնաժողովի անդամները այլ հարցեր նույնպաս ուղղեցին բողոքաբերի և նրանից և փաստաբանից ստացան պատասխաններ:

Հանձնաժողովի նախագահն իր բացատությունները ներկայացնելու համրար ձայնի իրավունք տվեց սնանկության գործով կառավարիչ՝ Սամսոն Ղուկասյանին,ով ներկայացրեց որ սնանկության վարույթում իր գործողությունները իրականացվել են բացառապես օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում,պարտապանի և գրավատուի հետ հարաբերությունները կառուցվել են հարգանքի և կոռեկտության հիմքով,իսկ շփումները միշտ եղել են բարիդրացիական ոճով,ինչ վերաբերվում է՝ փողոցային ոճի արտահայտություններին ապա հայտնեց որ այդ հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը:

Զանգերի վերաբերյալ հայտնեց,որ պարտապան Ա/Ձ-ի գործունեության դադարեցման վերաբերյալ դատարանի որոշումից հետո,իսկապես զանգել է պարտապանին և գրավատուին ու ասել որ գարծունեությունը պետք է դադարեցվի ըստ դատարանի որոշման,խոսակացությունը եղել ավելի երկար ,բայց բողոքաբերի կողմից ներկայացվում է իր ցանկացած մասը և իր տեսակետից:

Վտարման միջնորդություն ներկայացնելուց դատավորը հարցրել արդյոք գույքի սեփականատերերը ինքնակամ բանալիները չեն ուզում հանձնել,այսինքն որպեսզի հարկադիր կարգով չկատարվի,այլ արտադատարանական կարգով դա արվի,ես դրա համար զանգել եմ և բացատրել իրավիճակը,բնականաբար խոսակցության ընթացքում հնչել է նաև դատավորի անունը,քանի որ խոսքը վերաբերվում էր դատարանի կայացվելիք որոշմանը,ինչը կարող էր չկայանալ եթե նրանք ինքնակամ կհանձնեին բալանիները և կլքեին տարածքը:Այդ հեռախոսազանգից հետո ես պատասխանել եմ դատարանին որ ոչ ինքնակամ չեն հանձնում,որից հետո իմ միջնորդությունը քննարկվել է և բավարարվել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 77.1 հոդվածի սահմանված կարգով:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի «մեկա բոլոր ատյաններում պարտվելու էք և ձեր պայքարը անիմաստ է» իբրև թէ իմ արտահայտություններին,ապա պարզաբանեմ,որ այս դեպքում էլ բողոքաբերը ամբողջ զրույցից առանձնացնում է իր ցանկացած մասը և ներկայացնում է իր մտադրություններով,չնշելով ինչ զրույցի ժամանակ է արտայատվել այդ միտքը և ինչ

կոնտեքստում: Իրականում դա եղել է խորհրդի կարգով իմ կողմից այս գործում դիմումատուի փաստաբանական ծախսերի նպատակայնության վերաբյալ և իմ կողմից բերվել է օրինակ որ փաստաբանի առկայության դեպքում էլ բողոքարկված բոլոր գործերում իրենց օտին ոչ մի որոշում չի կայացվել:

Կառավարիչը հերթով անդրադարձավ այն ենթադրյալ խախտումներին,որոնք ներկայացվել էին ներկայացուցչիմ կողմից,այն է,

1.Աճուրդի հայտարարությունները տպվել են նաև թերթում,որոնք ներկայացված են դատարանին:

2.Լոտի նկարագրությունը կատարվել է գնահատման ակտի հիմքով,որտեղ վթարայնության մասին նշումներ չկան:

3.Աճուրդի կայացման արձանագրությունները կազմվել են երկու հատ քանի որ աճուրդի է դրված եղել երկու լոտ,ուստի սահմանված կարգով արձանագրությունները կազմվել են ամեն լոտի համար առանձին առանձին և նույն տեղում և աճուրդի կայացման պահին:

4. «Հրապարակային սակարությունների մասին»ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի խախտումներ չի կատարել քանի որ աճուրդի իրականացումը և հետագա պայմանագրի կնքումները իրականացվել է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի և ՀՀ Արդարադատության նախարարի հրամանով հաստատված «Աճուրդների իրականացման կարգ»-ով,իսկ այդ հոդվածը վերաբերվում է հարկադիր աճուրդներին,այսինքն այդ հոդված խախտումներ չէի կարող թույլ տալ:

5.Շուկայական արժեքի որոշումը կատարվել և ընդհանրապես կատարում է՝ հատուկ գիտելիքներ և մասնագիտական փորձ ունեցող,լիցենզավորված մասնագետը,որը և կատարել է գնահատումները,այսինքն ես այդ փաստաթուղթը չեմ կացմել և դա կեղծել չէի կարող:

6.Առողջացման ծրագիր պարտապանիմ կողմից օրենքով սահմանված կարգով,ներկայացվել է դատարանի,իսկ դատարանը,մինչ կառավարչին հանձնելը, դրա օրինականության ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունների հիմքով.առկա չի եղել գրավառուի համաձայնությունը,առողջացման ծրագիրը թողել է առանց քննության:Այսինքն առողջացման ծրագիրը պարտատերեի քննարկման համար չի հանձնվել կառավարչի,ուստի քննարկման համար ժողով չէր կարող հրավիրվել:Տվյալ պարագայում կառավարիչը ոչ մի միջոցառման չի մասնակցել,որպեսզի աջակցի կամ չաջակցի առողջացման ծրագրի հաստատմանը:

Ինչ վերաբերվում է այն պնդմանը որ բոլորը շահագրգռված են որ իրենց գրավի առարկաները իրացվեն,ապա նշեմ որ պարտապանը և գրավատուն որոնք հիմա բողոքում են,ի սկզբանե գրավադրել են իրենց գույքերը,որոնք ապահովել են պարտապանի պարտավորությունների կատարումը և այդ պարտավորությունների կատարման համար էլ,սնանկության վարույթում օրենքով սահմանված կարգով,գույքերը իրացվել են և մարվել են պարտապանի պարտավորությունները ապահովված պարտատիրոջ հանդեպ:Գույքերի իրացման ծրագրի քննարկման համար սահմանված կարով հրավիրվել է պարտատերերի ժողով որի մասին ծանուցվել է նաև պարտապանը,ծրագրի հաստատումից հետո համաձայն «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 76-րդ հոդված կառավարչի կողմից ծանուցվել են բոլոր կողմերը,այդ թվում նաև պարտապանը,այսինքն պարտապանը տեղեկացված է եղել այդ բոլոր պռոցեսներից և կարող էր,նաև օգտվել է իր,առարկություններ ներկայացնելու իրավունքներից:

Հանձնաժողովին ներկայացվեց ծանուցումների և փոստային անդորոգրերի լուսապատճենները:

Սնանկության գործով կառավարիչը նշեց որ դիմում նշված բոլոր հարցերի վերաբերյալ պարտապանի և նրա փաստաբանի կողմից ներկայացվել են առարկություններ,բողոքներ և օրենքով սահմանված բոլոր միջոցները այս վարույթում օգտագործվել է պարտապանի և գրավատուի կողմից,այսինքն բողոքարկվել են բոլոր որոշումները նանգամ սնանկության վճիռը և այդ դատական պռոցեսների ընթացքում քննարկվել է բոլոր նշված հարցերը և առկա են համապատասխան դատարանների ուժի մեջ մտած վճիռներ և որոշումներ,որոնց վերաբերյալ ինքը այս դիմումի քննարկման շրջանակներում բացատրություններ չի կարող տալ,այն պարզ պատճառով որ դրանք արդեն դատարանի կողմից ճանաչվել են ապացույցներ և կրկին անգամ քննարկման կարիք չի տեսնում:

Սնանկության գործով կառավարիչը եզրափակելով իր բացատրությունները խնդրեց հաշվի առնել վերոնշյալը և իր ներկայացրած փաստաթղթերը մերժել բողոքը անբողջությամբ և կարճել կարգապահական վարույթը:

Հանձնաժողովի անդամ Ա.Մովսիսյանը հայտնեց այն կարծիքը ,որ ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները,ներկայացրած բացատրությունները և փաստաթղթերը պարզ է դառնում,որ կառավարչի գործողությունները իրավաչափ են,որի ապացույց է հանդիսանում սնանկության վարույթում կայացրած և վերադաս դատարանների կայցրած որոշումները:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը համաձայնելով ներկայացրած կարծիքի հետ ավելացրեց,որ տվյալ պարագայում բողոքաբերի կառավարչին ներկայացրած վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումները վերաբերվում են հիմնականում բանավոր խոսքի ընկալումներին, որոնք պարզաբանվեցին կառավարչի կողմից,որ ներկայացված են կոնտեքստից դուրս,սեփական նպատակներին հարմարեցնելով կա:

Հանձնաժողովի անդամն նշեց նաև որ բողոքի փաստական հանգամանքները հիմնականում վերաբերվում են՝

1.լուծարման վարույթում պարտապանի գույքի արգելադրման

2.պարտապանի գործունեության և գույքի տնօրինման կասեցման

3.գույքը ազատելու,վտարման,հետ կապված կառավարչի գործողություններին,որոնց իրականացման վերաբերյալ բացի օրենքի ընհանուր պահանջից այլ կանոնակարգ կամ կանոններ առկա չեն և չկա ընդհանուր գործելաոճ:

Այսինքն կառավարիչները այդ գործողությունները կատարում են ըստ գործերի նպատակահարմարության,տվյալ դեպքում կառավարիչը կատարել է հեռախոսազանգերի միջոցով և ինչպես բողոքն է ցույց տալիս պարտապանի կողմից դա չի ընկալվել ճիշտ կամ ցանկություն չի ունեցել ընկալելու այնպես ինչպես նպատակահարմար կլիներ կառավարչին, բայց ամեն դեպքում բանավոր խոսքի մեջ իր կարծիքով կառավարիչը պահպանել է կոռեկտությունը և հարգալից վերաբերմունքը:

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ ըստ էության ստացվում է,որ բողոքաբերի նշված համարյա բոլոր փաստերի վերաբերյալ առկա է դատարանի որոշում և հիմականում բողոքարված են վերաքննության և Վճռաբեկության կարգով,ասինքն պարտապանը իր շահերի պաշպանի հետ միասին դատական կարգով օրենքով սահմանված կարգով իրացրել են իրենց իրավունքները և ստացել են այդ հարցերի պատասխանները դատական ակտերի տեսքով,այդ թվում՝պահանջի չափի,առողջացման ծրագրի,աճուրդի թույտվության և իրականացման,վտարման,վերաբերյալ:

Բողոքաբերները դատական ատյաններում իրենց բողոքների,առարկությունների պատասխանները ստանալով,այս դիմումով փորձում են նույնաբովանդակ բողոքները ներկայացնել այլ մարմիններին,այդ թվում նաև կառավարչի վարքագծի հարցերը փորձում են կապել դատարանի և պարտատիրոջ գործողությունների հետ և դրանք ներկայացնել ինչ ինչ պայմանավորվածությունների արդյունք,որոնք իբր թե ուղղված են իրենց ունեզրկելու հետ:

Այդ կարծիքը՝որ.

-Բանկը,սնանկության գործով կառավարիչը և սնանկության գործով դատավորը ունեն առնձնահատուկ շահագրգռվածություն գրավադրված գույքերը վերցնելու,իրացնելու հյարցում, բողոքաբերի կողմից ճիշտ չի ձևակերպվում քանի որ այդ գործընթացը սնանկության վարույթում բնութագրվում է որպես պարտապանի ակիտիվների հաշվին պահանջների բավարարման գործընթաց,տվյալ դեպքում պարտավորության կատարման ապահովման միջոցների/գրավի առարկաների/ հաշվին ապահովված պարտատիրոջ պահանջների բավարարում,որպիսի գործընթացը սահմանված է օրենքով և համապատասխան կարգերով:

Բողոքաբերների ներկայացրածը հիմնավորված չեն փաստերով և բողոքաբերը ոչ մի ապացույց չներկայացրեց,բացի իր նշած հեռախոսազանգերի իր սեփական ձևակերպումները, որոնք ըստ էության կառավարչի կողմից չհերքվեցին այլ բացատրվեցին թե ինչ կոնտեքստում են այդ զանգերը եղել և բացատրվեցին օրենքի տեսակետից,որպես դատարանի տարբեր որոշումների կատարման անհրաժեշտությունից ելնող գործողություններ:

Նախագահն նշեց,որ հաշվի առնելով ներկայացված փաստերը,փաստաթղթերը և բացատրությունները պդետք է փաստել,որ կառավարչի գործողությունները չեն հակասում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 23.1-րդ հոդված և ոչ մի կետին:

Հանձնաժողովի նախագահն առաջարկեց ընդունել կառավարչի բերած օբեկտիվ պատճառաբանությունները և կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամները նույնպես հայտնեցին,որ իրենց կարծիքով նույնպես կառավարչի գործողությունները բխել են օրենքից և իրենց մեջ կարգապահական խախտումներ չեն պարունակում:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և բացատրությունները և արդյունքում քվեարկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. ՀՀ Վարչապետի աշխատակազմից 17.07.2023թ-ին ՀՀ Արդարադատության նախարարություն հասցեյագրված,իսկ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝28.07.2023թ. ստացված քաղաքացիներ՝ Արմիկ Գրիգորի Հարությունյանի և Արմեն Ռուբենի Հարությունյանի թիվ 150-42077 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ ՄՆԴ/1500/04/21 սնանկության գործով սնանկության գործով կառավարիչ՝ Սամսոն Ղուկասյանի գործողությունների /անգործության/, վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 1-ին ենթակետի հիմքով՝ կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան